Ինանք էլնեն կրակ, ես էլնեմ գեարնան դեռ, չեմ կանայ ընցուցե։»

86. Էս խօսքն վէրէն Աստծու խնամքով ձին սկսեց խօսել ու ասաց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած,

Խնամք շատ էր մեծ թագաւորուն։

Տաւիթ խամ մի աներ։

Ըսկում որ տիւ տի սպանես քրոյ խօր կեծակի թրովն, ես տի սպանեմ իմ ոտաց սմերով։

Ըսկում որ տիւ սպանես քրոյ կոռզերով, ես որ սպանեմ իմ պոչի մազերով։

Ըսկում որ տիւ սպանես քրոյ սմերով, ես տի սպանեմ իմ քթի շնչով»։

87. Տաւիթի սիրտ ձիու խօսքերով պնտեցաւ կանչեց.

«Օրհնեա՛լ բարերար Աստուած, ասաց, խնամք շատ էր մեծ թագաւորուն»։ Կանչեց խեծլին. «Որ ինչ արթիւն էք, ձիանք թամքեցէք, որ ինչ քիւն՝ արթիւն մնացէք, ձեր ճարը տեսէք, չասէք Տաւիթ գող էր, գուղութնով էկաւ վեր մե»։

88. Զին տառձաւ Տաւիթին, ասաց. «Կայիմ կաց վեր իմ քեամ-կին. քե պիտի խանեմ խետ արէգական քրոյ քեամակն իրիցի։ —Տաւիթն ասաց, տի օլրվեմ վորտ տակ։—Զին ասաց, տի իջնեմ չում գետին, քե զարկեմ տանեմ յանտուիթկ, կորցուցեմ։ —Տավիթն տի էնեմ վեր քրոյ քեամկին, ասաց Տաւիթ, քշեց մէջ խեծլին. եօթն օր ձին կռիւ արաց, ինքն շըշկռաց մնաց վեր ձիուն։

89. Զէնով Յովան իրիշկեց երկինք, տեսաւ որ Տաւիթի ասաղն նվաղեր ի. վաղեց վակախ ուր սեւ լայեղ[1] ձիուն ասաց. «Տաւ-թի ասաղ նվաղեր ի»։—Զին ասաց, որ քե իմ քեամկի վէրէն բրա-նես, աչիչ թօրթամի քե տի խասուցեմ Տաւիթին։ Զէնով Յո-վան թռաւ ձիու քեամակ. ձեռ թալեց մէկ բարտի ծառ, քէօք-մանց քաշեց տիւրս. արաց ուր ճպոթ[2], խասաւ մէջ Մարայ մէջիքի խեծլին. տէսաւ որ Տաւիթ շըշկռեր ի։ Տաւիթին ասաց. «Կայնի՛, ես քե կռիւ անել սորվեցուցեմ»։ Ուր ձեռաց ճպոթ մէկ մը աջ վարատեց, 300 հոգի մէկանց ինկան, մէկ մը ձախ վա-ռատեց, 600 հոգին թմբմաւ։

90. Տաւիթն ասաց. «Խօրօխպէր, տէ տիւ տէն քեաշուի, ես տի կռվեմ»։ Տաւիթն էր քեաշեց թուրն կեծակին, ասաց.

«Ցիշամ քի խէրն կենտանին,

---

1 Արժանի. վայելուչ։ 2 Վարոց։